

**ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 29-06-2026 թ. որոշմամբ
«ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
հիմնադրամի 2025 թ. գործունեության մասին**

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը	«ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ	
1.2 Գտնվելու վայրը	ԼՈՌԻ ՏԱՇԻՐ ԶԱՀՈՒԿՅԱՆ 10	
1.3 Պետական գրանցման համարը	222.160.01009	
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2008-08-27	
1.5 ՀՎՀՀ-ն	07203481	
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)98939770	
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը	beglaryan.ash@gmail.com	
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Աշոտ Վարդյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	7	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Կանոնադրական նպատակների իրականացման համար	2,831,434,000
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	10,600,000	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը

10. Նվիրատվություններ/ նվիրաբերություններ		
10.1 Նվիրատուներ/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Ֆինանսական օգնություն ֆիզ անձիք(կարիքավոր, հաշմանդամ, բուժման նպատակներով)	240,982,354	
Ֆինանսական օգնություն Իրավաբանական անձանց	241,805,083	
Ֆինանսական օգնություն Ուսման վարձ և կրթաթոշակ	5,045,000	
Ֆինանսական օգնություն Արարատ-Արմենիա ֆուտբոլային ակումբ	672,418,400	
ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՀԱՐԴԱՐՈՒՄ ԵՎ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ ՍՊԻՏԱԿՈՒՄ	42,890,902	
Լեռնահովիտ գյուղի փողոցների և հարակից տարածքների բարեկարգում	77,035,754	
Ֆինանսական օգնություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին	76,300,000	
ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԼԵՈՒԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՐՈՒՄ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ	71,815,610	
Ֆինանսական օգնություն ՄԵՐ ՁԵՎՈՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԿ	1,016,527,735	
"ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՈՒՄ ՍՈԹՔՈՒՄ"	113,634,641	
գ Մեծավանի Հրապարակի բարեկարգում	54,472,692	
Ֆինանսական օգնություն «ԼԱՅԸՆ ՀԱՐԹ» ՄԱՐԶԱԿԱՆ ՀԿ	95,994,859	
ք Սևանում խաղահրապարակի կառուցում	6,512,367	
<Գյումրու տոն> միջոցառման կազմակերպում	42,044,373	
Ֆինանսական օգնություն Շախմատի հայկական ասոսացիա ՀԿ-ին	5,000,000	
Ֆինանսական օգնություն այլ կազմակերպությունների	2,660,000	
Այլ օգնություններ	5,937,000	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	2,841,378,000	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	2,771,076,770	

Նշումներ՝

<https://gorcntac.am/pages/report?id=3217>

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն
իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 15 էջերից:
Էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

**«Տաշիր»
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ**

Ֆինանսական հաշվետվություններ

*2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին*

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	1
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	2
Չուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	3
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	4

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Գործունեության նկարագրություն	5
2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները	5
3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը ..	5
4. Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ	8
5. Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ	8
6. Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ.....	9
7. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	10
8. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	10
9. Տրամադրված փոխառություններ	10
10. Ստացված փոխառություններ	11
11. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11
12. Եկամուտներ շնորհներից	11
13. Այլ ծախսեր	12
14. Վարչական ծախսեր	12
15. Պարտավորվածություններ, պայմանական պարտավորություններ	12
16. Գործարքներ կապակցված կողմերի հետ	13
17. Իրական արժեք և ռիսկերի կառավարում	13
18. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր	15

ՖԻՆՍ ԱՌԻԴԻՏ ՓԲԸ

Հասցե՝ Երևան, Պարոնյան 9 բն. 12

Էլ. հասցե՝ info@fins.am

Հեռ.՝ +374 60 525 025



FINS AUDIT CJSC

Address: Yerevan, Paronyan str. 9 h. 12

Email: info@fins.am

Phone: +374 60 525 025

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Տաշիր» բարեգործական հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար համապարփակ ֆինանսական արդյունքների, դրամական միջոցների հոսքերի և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամ ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար համապարփակ ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը» ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի Էթիկայի միջազգային կանոնադրի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՍ կանոնագիրը), և պահպանել ենք Էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍ կանոնների:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանքներ

«Տաշիր» բարեգործական հիմնադրամի 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, ով այդ հաշվետվությունների վերաբերյալ 2025թ. Հունիսի 26-ին արտահայտել է չձևափոխված կարծիք:

Ղեկավարության և Հոգաբարձուների խորհրդի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան ռեպլերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Հոգաբարձուների խորհրդը պատասխանատու է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամուտք են կարող է

ՖԻՆԱ ԱՌԻԴԻՏ ՓԲԸ

Հասցե՝ Երևան, Պարոնյան 9 բն. 12

Էլ. հասցե՝ info@fins.am

Հեռ.՝ +374 60 525 025



FINS AUDIT CJSC

Address: Yerevan, Paronyan str. 9 h. 12

Email: info@fins.am

Phone: +374 60 525 025

ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազմեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի յուրմէ՝

► հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:

► ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքների համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

► գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամուտությունը:

► եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են միևնույն աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Հիմնադրամի գործունեության անընդհատության դադարեցմանը:

► գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Հոգաբարձուների խորհրդին, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«ՖԻՆԱ ԱՌԻԴԻՏ» ՓԲԸ

29 հունիսի, 2026թ.

ՀՀ, ք. Երևան

Տնօրեն



Արմինե Ավագյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ


(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2025թ.	2024թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	7	7,071	10,737
		<u>7,071</u>	<u>10,737</u>
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	8	1,164	32,810
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր		217,493	298,292
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		22,909	3,143
Տրամադրված փոխառություններ		610,160	7,725,302
		<u>851,726</u>	<u>8,059,547</u>
Ընդամենը ակտիվներ		<u>858,797</u>	<u>8,070,284</u>
Չուտ ակտիվներ			
Չուտ ակտիվներ		(17,908)	-
		<u>(17,908)</u>	<u>-</u>
Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ փոխառություններ	10	811,951	8,019,663
Եկամուտներին վերաբերող շնորհներ	9	656	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	64,098	50,621
		<u>876,705</u>	<u>8,070,284</u>
Ընդամենը զրուտ ակտիվներ և պարտավորություններ		<u>858,797</u>	<u>8,070,284</u>

Սույն ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Հիմնադրամի ղեկավարության կողմից՝

Ղեկավար՝
Ֆինանսական պատասխանատու՝

29 հունիսի, 2026թ.



Վշոտ Վարդյան
Եմալյա Մարտիրոսյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն**2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար***(հազար ՀՀ դրամ)*

	Ծան.	2025թ.	2024թ.
Եկամուտներ շնորհներից	12	2,820,468	2,168,656
Այլ եկամուտ		728	4,744
Ընդամենը եկամուտ		2,821,196	2,173,400
Այլ ծախսեր	13	(2,796,560)	(2,129,559)
Վարչական ծախսեր	14	(46,475)	(39,499)
Ընդամենը ծախսեր		(2,843,035)	(2,169,058)
Գործառնական (վնաս)		(21,839)	4,342
Արտարժույթի փոխարժեքի փոփոխություններից զուտ տարբերություններ		3,931	(4,342)
Հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ եկամուտ/(վնաս)		(17,908)	-

Չուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն**2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար***(հազար ՀՀ դրամ)*

	Զբաղիված շահույթ	Ընդամենը
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-
Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ (վնաս)	-	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-
Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ (վնաս)	(17,908)	(17,908)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(17,908)	(17,908)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն**2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար***(հազար ՀՀ դրամ)*

	2025թ. 3,143	2024թ. 17,615
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը		
Այլ եկամուտներից	1,800	1,800
Գործառնական այլ գործունեությունից	911,034	2,096,824
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	912,834	2,098,624
Նյութերի, ապրանքների ձեռքբերման գծով	273,687	201,209
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով	219,246	131,522
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	20,323	25,358
Վճարումներ բյուջե	9,690	9,093
Գործառնական այլ գործունեությունից ելքեր	2,173,399	1,916,452
Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր	2,696,345	2,283,634
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր</i>	(1,783,511)	(185,010)
Ընդամենը ներդրումային գործունեությունից մուտքեր		
Ներդրումային այլ գործունեությունից մուտքեր	4,038,035	16,392,176
Ընդամենը ներդրումային գործունեությունից մուտքեր	4,038,035	16,392,176
Ներդրումային այլ գործունեությունից ելքեր	1,957,124	16,845,117
Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր	1,957,124	16,845,117
<i>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր</i>	2,080,911	(452,941)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Փոխառություններից	9,051,481	15,526,135
Ընդամենը ֆինանսական գործունեությունից մուտքեր	9,051,481	15,526,135
Փոխառությունների մարումից	9,328,921	14,902,509
Ընդամենը ֆինանսական գործունեությունից ելքեր	9,328,921	14,902,509
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(277,440)	623,626
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	19,960	(14,325)
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	(194)	(147)
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ	22,909	3,143

(հազար ՀՀ դրամ)

1. Գործունեության նկարագրություն

Տաշիր Բարեգործական Հիմնադրամը հիմնադրվել է 2008 թվականի օգոստոսի 25-ին հիմնադիրների որոշմամբ, որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, գիտական, կրթական և այլ հանրօգուտ նպատակներ: Հիմնադրամի կանոնադրության վերջին փոփոխությունը գրանցվել է 17.05.2018թ-ին, գրանցման թիվ՝ 222.160.01009:

Կազմակերպության հարկ վճարողի հաշվառման համարն է 07203481:

Կազմակերպության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, Լոռու մարզ, Զ. Տաշիր, Զահուկյան 10:

Հոգաբարձուների խորհուրդը բաղկացած է 4 անդամից: 2025թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամն ունեցել է 7 աշխատող (2024՝ 7 աշխատող):

2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

Ընդհանուր

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ):

Հիմնադրամը պարտավորված է իրականացնել հաշվապահական հաշվառումը և պատրաստել ֆինանսական հաշվետվությունները ՀՀ դրամով՝ հաշվապահական հաշվառման ՀՀ օրենսդրությանը և դրանից բխող ցուցումներին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքի հիման վրա, ինչպես բացահայտված է ստորև բերված հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (ՀՀ դրամ), և բոլոր արժեքները կլորացված են մինչև հազար ՀՀ դրամ, եթե այլ բան նշված չէ:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներն ու դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները և բանկային հաշիվների մնացորդները:

Ավանդադրված միջոցները դասակարգվում են որպես կարճաժամկետ, եթե նրանց մարման ժամկետը հաշվետու ժամանակաշրջանից հետո մինչև 90 օր է:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցներն արտացոլվում են սկզբնական արժեքով՝ առանց ընթացիկ սպասարկման ծախսերի՝ հանած կուտակված մաշվածություն ու արժեզրկումից կուտակված կորուստները: Արժեքը ներառում է սարքավորման փոխարինման ժամանակ կատարված ծախսերը, եթե դրանք բավարարում են ճանաչման չափանիշներին:

Հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերանայվում է արժեզրկման տեսանկյունից այն դեպքում, երբ առաջանում են դեպքերի կամ հանգամանքների այնպիսի փոփոխություններ, որոնք վկայում են ակտիվի հաշվեկշռային արժեքի հնարավոր չվերականգնման վերաբերյալ:

Ակտիվի մաշվածության հաշվարկը սկսվում է կատարվել այն ժամանակ, երբ այն օգտագործման համար դառնում է հասանելի: Մաշվածությունը հաշվարկվում է ուղիղ գծային մեթոդով՝ ակտիվի ներքոնշյալ օգտակար ծառայության գնահատված ժամկետների ընթացքում:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

Հիմնական միջոցներ (շարունակություն)

(ii) Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցների բաղկացուցչի փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ ընկերություն կհոսեն այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, և դրա արժեքը հնարավոր է արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում առաջանալուն պես:

(iii) Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործմանը պատրաստ լինելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործմանը պատրաստ լինելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը:

Ստորև ներկայացված են նշանակալի հիմնական միջոցների օգտակար ծառայության գնահատված ժամկետները ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար.

Մեքենաներ և սարքավորումներ – 8 տարի

Արտադրատնտեսական գույք – 8 տարի

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

Ֆինանսական ակտիվներ

Հիմնադրամի ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման պահին դասակարգվում են որպես հետագայում ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ:

Հիմնադրամն ունի այնպիսի ֆինանսական ակտիվներ, ինչպիսիք են դրամական միջոցներն ու դրանց համարժեքները և ավանդադրված միջոցներ, որոնք հանդիսանում են իր գործունեության անմիջական արդյունքը:

Ֆինանսական ակտիվը (կամ, որտեղ կիրառելի է, ֆինանսական ակտիվի մի մասը, կամ համանման ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքի ժամկետն ավարտված է, Հիմնադրամը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանել է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամբողջությամբ և առանց էական ուշացման փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման պայմանավորվածության համաձայն, ինչպես նաև, Հիմնադրամը կամ (ա) փոխանցել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և հատույցների զգալի մասը, կամ (բ) ոչ փոխանցել և ոչ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և հատույցների զգալի մասը, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Այն դեպքում, երբ Հիմնադրամը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը և ոչ փոխանցել ու ոչ էլ պահպանել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և հատույցների զգալի մասը, և չի փոխանցել ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ակտիվը ճանաչվում է Հիմնադրամի շարունակվող մասնակցությամբ համարժեք: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև, այդպիսի մասնակցությունը չափվում է հետևյալ երկու մեծություններից՝ նվազագույնով՝ ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեք և Հիմնադրամից պահանջվող փոխհատուցման առավելագույն գումար:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ պարտքային գործիքները սկզբնական ճանաչումից հետո չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով: Դասակարգումը հիմնված է հետևյալ երկու չափանիշների վրա: Հիմնադրամի ակտիվների կառավարման բիզնես մոդելի և արդյոք գործիքի գծով պայմանագրային դրամական միջոցների հոսքերը բավարարում են «բացառապես հիմնական գումարի և տոկոսների վճարման» չափանիշին: ՖՀՄՍ 9-ը պահանջում է Հիմնադրամից ճանաչել ակնկալվող պարտքային կորստի գծով պահուստ բոլոր այն պարտքային գործիքների համար, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով:

Հիմնադրամը բանկերում բացված հաշիվների և ավանդների համար պահուստի գումարը հաշվարկում է՝ ելնելով գործընկեր բանկի երկարաժամկետ վարկային ռեյտինգից:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ հանած գործարքին ուղղակիորեն վերագրելի ծախսերը, և չեն դասակարգվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Հետագա չափումը կատարվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հիմնադրամի հիմնական ֆինանսական պարտավորությունները բաղկացած են կրեդիտորական պարտքերից, վարկերից և փոխառություններից:

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ մարվում, չեղյալ է համարվում կամ ուժի մեջ լինելու ժամկետը լրանում է:

Եկամուտներ ստացված նվիրաբերություններից

Շնորհներից եկամուտը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Հիմնադրամի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ակտիվներին վերաբերող շնորհներ և սխտեմատիկորեն փոխանցվում են շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ պետական շնորհները ճանաչվում են սխտեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Եկամուտներին վերաբերող շնորհները, որոնց հատկացվում է Հիմնադրամի՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

Չուտ ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամի կապիտալը ներկայացնում է իր զուտ ակտիվները: Հիմնադրամի զուտ ակտիվները չեն բաշխվում հիմնադիրների միջև ո՛չ սովորական գործունեության ընթացքում, և ոչ էլ՝ լուծարման ժամանակ:

Ծախսեր

Վճարները, միջնորդավճարները և այլ ծախսերը սովորաբար ճանաչվում են հաշվեգրման եղանակով, երբ ծառայությունը համարվում է մատուցված, իսկ մրցույթների, միջոցառումների, տրված ենթադրամաշնորհի և ֆինանսական աջակցության գծով ծախսերը ճանաչվում են դրանց համար գումարը փոխանցելու պահին:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճար, եթե Ընկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարելու որպես աշխատողի կողմից մատուցված անցյալ ծառայության արդյունք և կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

Արտարժույթային գործառնություններ

Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են Հայկական դրամով, որը Հիմնադրամի դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են հաշվետու ամսաթվի դրությամբ գործառնական արժույթի փոխանակման փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնք չափվում են պատմական արժեքով, արտարժույթով վերահաշվարկվում են՝ օգտագործելով սկզբնական գործարքի ամսաթվի դրությամբ փոխարժեքները:

Արտարժույթով գործարքների պայմանագրային փոխարժեքի և գործարքի օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքի տարբերությունները արտացոլվում են արտարժույթային գործառնություններից առաջացած օգուտ կամ վնասում:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից 1 ԱՄՆ դոլարի համար հայտարարված փոխարժեքը կազմում էր 381.36 ՀՀ դրամ (2024թ.՝ 396.56 ՀՀ դրամ), 1 եվրոյի համար՝ 449.01 ՀՀ դրամ (2024թ.՝ 413.89 ՀՀ դրամ), 1 Ռուսական ռուբլու համար՝ 4.8711 ՀՀ դրամ (2024թ.՝ 3.71 ՀՀ դրամ):

4. Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ

Ընթացիկ տարում Հիմնադրամը ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2025թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

ՀՀՄՍ 21 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ» ստանդարտի փոփոխությունը՝ կապված «Փոխանակելիության բացակայության» հետ առաջին անգամ կիրառվել է 2025թ., որը սահմանում է պահանջներ՝ գնահատելու, թե երբ է արժույթը փոխարկելի այլ արժույթի նկատմամբ, և երբ՝ ոչ: Ստանդարտի այս փոփոխության ընդունումը ազդեցություն չի ունեցել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

5. Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

- «Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ» (ՀՀՄՍ 9 և ՀՀՄՍ 7 փոփոխություններ)
- ՀՀՄՍ 18 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»

(հազար ՀՀ դրամ)

6. Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ

Հիմնադրամի կողմից հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում Հիմնադրամի ղեկավարությունը կատարել է գնահատումներ և դատողություններ՝ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տվյալների որոշման համար: Առավել էական ազդեցություն ունեցող գնահատումները և դատողությունները հետևյալն են

Ակտիվների արժեզրկումը և պահուստների հաշվառումը

Հիմնադրամը պարբերաբար վերանայում է իր ակտիվների արժեզրկման հայտանիշները: Հիմնադրամը անհրաժեշտության դեպքում կիրառում է իր մասնագիտական դատողությունները՝ գնահատելու համար ցանկացած արժեզրկումից կորուստների գումարը:

Նույն կերպ, Հիմնադրամը գնահատում է ապագա դրամական հոսքերում փոփոխությունները՝ հիմնվելով այն դիտարկելի տվյալների վրա, որոնք մատնանշում են գործընկերների վճարունակության մակարդակների բացասական փոփոխությունները, կամ ազգային կամ տեղական տնտեսական իրավիճակների փոփոխությունները, որոնք որևէ կերպ առնչվում են ակտիվների արժեզրկման հետ: Սեփական փորձից ելնելով՝ Հիմնադրամը կիրառում է իր մասնագիտական դատողությունները ակտիվների վերաբերյալ դիտարկելի տեղեկատվության ճշգրտման համար՝ ընթացիկ իրավիճակը արտացոլելու նպատակով:

Հիմնադրամը ակնկալվող պարտքային կորուստների գծով ծախս չի ճանաչել և պահուստ չի ձևավորել՝ հաշվի առնելով վերջիններիս գումարային ոչ էական լինելը:

(հազար ՀՀ դրամ)

7. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Առևտրային և այլ դեբիտորական պարտքերը ներառում են հետևյալ հոդվածները.

	2025թ.	2024թ.
Տրված կանխավճարներ	214,027	263,603
Բյուջեի գծով	2,190	1,345
Աշխատակիցների գծով	1,276	1,717
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	31,627
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	217,493	298,292

8. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ներառում են՝

	Արժույթ	2025թ.	2024թ.
Ընթացիկ հաշիվներ բանկերում	ՀՀ դրամ	20,568	800
Դրամարկդում	ՀՀ դրամ	2,341	2,343
Ընդամենը		22,909	3,143

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (2024թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ նույնպես) Հիմնադրամի դրամական միջոցները տեղաբաշխված են ՀՀ վստահելի առևտրային բանկերում: Դրամական միջոցների և դրանց համարժեքների բոլոր մնացորդները դասակարգված են Փուլ 1-ում:

9. Տրամադրված փոխառություններ

Հիմնադրամի փոխառությունների շարժը ներկայացված է ստորև՝

Մնացորդ առ 31.12.2024	7,725,302
Մարում	(9,061,346)
Պահուստի ձևավորում	(17,908)
Ավելացում	1,964,112
Ընդամենը	610,160

Տրված փոխառությունները անտոկոս են և ցպահանջ:

Փոխառությունների մնացորդները ըստ գործընկերների ներկայացված է ստորև՝

	2025թ.	2024թ.
Երևանյան Կրկես ՍՊԸ	205,957	204,897
Նոր Երևան ՍՊԸ	198,355	204,066
Տաշիր Կապիտալ	82,162	
Նաշ Դոմ ՓԲԸ	74,138	79,312
Կասկադ Էներգո Սերվիս ՍՊԸ	27,410	28,199
Դեֆի ՍՊԸ	18,506	19,040
Ջեներալ Զեյթլ ՓԲԸ	3,632	3,737
Արմհոլդինգ ՓԲԸ	-	7,186,051
Ընդամենը	610,160	7,725,302

(հազար ՀՀ դրամ)

10. Ստացված փոխառություններ

Հիմնադրամի փոխառությունների շարժը ներկայացված է ստորև՝

Մնացորդ առ 31.12.2024	8,019,663
Մարում	(11,245,747)
Ավելացում	4,038,035
Ընդամենը	811,951

Ստացված փոխառությունները անտոկոս են և ցպահանջ:

Փոխառությունների մնացորդները ըստ գործընկերների ներկայացված է ստորև՝

	2025թ.	2024թ.
Արմիոլիկա ՓԲԸ	811,951	-
Տաշիր Կապիտալ	-	8,019,663
Ընդամենը	811,951	8,019,663

11. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ներառում են հետևյալ հոդվածները.

	2025թ.	2024թ.
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	50,970	39,766
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	740	844
Արձակուրդի պահուստ	12,388	10,011
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	64,098	50,621

12. Եկամուտներ շնորհներից

Ստորև ներկայացված է ակտիվներին վերաբերող շնորհների շարժը՝

	Ակտիվներին վերաբերող շնորհներ
Մնացորդը առ 1 հունվար 2025	-
Ստացված տարվա ընթացքում	2,842,034
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	(2,841,378)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	656

Ընկերությունը շնորհներ ստացել է հետևյալ կազմակերպություններից, որոնց մնացորդը ներկայացված է ստորև.

	2025թ.	2024թ.
Արմիոլիկա ՓԲԸ	2,800,322	74,680
Հայաստանի էլեկտրական ցանցեր ՓԲԸ	27,083	760,731
Վահե Կարենի Կարապետյան	10,600	40,000
S-Մետալ ՓԲԸ	4,000	11,130
Նորտեքս Էնջինիրիկա ՓԲԸ	29	100
Ընդամենը	2,842,034	886,641

(հազար ՀՀ դրամ)

13. Այլ ծախսեր

	2025թ.	2024թ.
Օգնություններ	2,771,077	2,123,493
Տրամադրված փոխառությունների գծով պահուստի ճանաչում	17,908	-
Դեբիտորական պարտքերի դուրս գրում	-	4,500
Տույժ տուգանքներ	-	12
Այլ ծախսեր	7,575	1,554
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	2,796,560	2,129,559

Օգնությունները բաշխվել են հետևյալ ուղղություններով,

	2025թ.
Ֆինանսական օգնություն ՄԵՐ ՁԵՎՈՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵԶՆԵՐԻ ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԿ	1,016,528
Ֆինանսական օգնություն Արարատ-Արմենիա ֆուտբոլային ակումբ	672,418
Ֆինանսական օգնություն Իրավաբանական անձանց	241,805
Ֆինանսական օգնություն Ֆիզիկական անձանց	240,982
Սոթքի շինարարություն	113,635
Ֆինանսական օգնություն «ԼԱՅԸՆ ՀԱՐԹ» ՄԱՐԶԱԿԱՆ ՀԿ	95,995
Շինարարություն Լեռնահովտի փողոցների և հարակից տարածքների բարեկարգում	77,036
Ֆինանսական օգնություն Մայր Աթոռ	76,300
Օժանդակություն Արցախահայությանը	71,816
Մեծավանի Հրապարակի բարեկարգում	54,473
Շինարարություն Սպիտակի մանկապարտեզ	42,891
Գյումրու տոնի կազմակերպում	42,044
Ֆինանսական օգնություն այլ կազմակերպությունների	7,660
Ֆինանսական օգնություն Ուսման վարձ և կրթաթոշակ	5,045
Սևանի խաղահրապարակի բարեկարգում	6,512
Այլ օգնություններ	5,937
Ընդամենը	2,771,077

14. Վարչական ծախսեր

Միջոցառումների կազմակերպման գծով ծախսերը ներառում են հետևյալ հոդվածները.

	2025թ.	2024թ.
Աշխատանքի վճարման ծախսեր	35,209	33,117
Մաշվածության գծով ծախսեր	5,656	3,835
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	2,035	2,045
Բանկային ծախսեր	376	136
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	-	20
Այլ վարչական ծախսեր	3,199	346
Ընդամենը	46,475	39,499

15. Պարտավորվածություններ, պայմանական պարտավորություններ**Հիմնադրամի գործառնական միջավայրը**

Հայաստանի Հանրապետությունը շարունակում է տնտեսական բարեփոխումները և իրավական, հարկային ու օրենսդրական համակարգերի զարգացումը՝ շուկայական տնտեսության պահանջներին համապատասխան:

(հազար ՀՀ դրամ)

15. Պարտավորվածություններ, պայմանական պարտավորություններ (շարունակություն)**Հիմնադրամի գործառնական միջավայրը (շարունակություն)**

Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը առավելագույն կախված է այս բարեփոխումներից և զարգացումներից, ինչպես նաև կառավարության կողմից իրականացվող տնտեսական, ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունների արդյունավետությունից:

Ներկայումս հիմնադրամի ղեկավարությունը հետևում է միկրո և մակրոտնտեսական պայմանների փոփոխության հնարավոր ազդեցությունը Հիմնադրամի ֆինանսական վիճակի և գործունեության վրա:

16. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հիմնադրամի հիմնադրի մասին տեղեկատվությունը բացահայտված է Ծանոթագրություն 1-ում: Ղեկավարությունը գտնում է, որ Հիմնադրամը տիրապետում է կապակցված կողմերի հետ գործարքների որոշման և պատշաճ կերպով բացահայտման համապատասխան գործընթացների:

Հիմնադրամը կապակցված կողմերի հետ կատարում է այնպիսի գործարքներ, որոնք համարժեք են անկախ կողմերի հետ գործարքներին:

Գործարքներ առանցքային ղեկավար անձնակազմի հետ

Ստորև ներկայացված են առանցքային ղեկավար անձնակազմի հետ գործարքների ընդհանուր գումարները և մնացորդները:

	Գործարքի գումարը դեկտեմբեր 31-ի ավատված տարվա համար		Մնացորդը առ 31 դեկտեմբերի	
	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.
Աշխատավարձ և պարգևավճարներ	7,935	5,854	-	-
	7,935	5,854	-	-

17. Իրական արժեք և ռիսկերի կառավարում

Հիմնադրամի հիմնական ֆինանսական գործիքները կազմված են դրամական միջոցներից և դրանց համարժեքներից, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերից: Այս ֆինանսական գործիքների հիմնական նպատակը Հիմնադրամի բարեգործական գործունեությունում կիրառումն է:

Հիմնական ռիսկերը, կապված Հիմնադրամի ֆինանսական գործիքների հետ, հանդիսանում են տոկոսադրույքի ռիսկը, արտարժույթի փոխարժեքի տատանման ռիսկը, վարկային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Հիմնադրամի Հոգաբարձուների խորհուրդը իրականացնում է վերահսկողություն այդ ռիսկերից յուրաքանչյուրի գծով, որն ամփոփված է ստորև:

Իրական արժեքի չափման գործընթացներ

Իրական արժեքի վերաբերյալ տեղեկատվության բացահայտման նպատակով Հիմնադրամի առանձնացրել է ակտիվների և պարտավորությունների դասեր՝ հիմնվելով ակտիվների և պարտավորությունների բնույթի, առանձնահատկությունների և ռիսկերի, ինչպես նաև իրական արժեքի հիերարխիայի վրա:

Իրական արժեքների գնահատման համար օգտագործվել են հետևյալ մեթոդներն ու ենթադրությունները:

(հազար ՀՀ դրամ)

15. Իրական արժեքի չափման գործընթացներ (շարունակություն)

- Հիմնադրամը գնահատել է, որ դրամական միջոցների և դրանց համարժեքների և առևտրային կրեդիտորական պարտքերի, իրական արժեքները հավասար են դրանց հաշվեկշռային արժեքներին այդ գործիքների կարճաժամկետ մարման ժամկետ ունենալու պատճառով: Այդ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գնահատված իրական արժեքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում:

Տոկոսադրույքի ռիսկ

Հիմնադրամի եկամուտները և գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքերը անկախ են շուկայական տոկոսադրույքի փոփոխություններից:

Արժույթային ռիսկ

Արտարժույթի ռիսկը արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է:

Արտարժույթային ռիսկը Հիմնադրամը ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների վրա ունի հետևյալ ազդեցությունը`

	առ 31 դեկտեմբերի 2025թ		
	Դրամական ֆինանսական ակտիվներ	Դրամական ֆինանսական պարտավորություններ	Չուտ հաշվեկշռային դիրք
ԱՄՆ դոլար	76,272	-	76,272
Եվրո	89,353	-	89,353
Ռուբլի	-	(889)	(889)

	առ 31 դեկտեմբերի 2024թ		
	Դրամական ֆինանսական ակտիվներ	Դրամական ֆինանսական պարտավորություններ	Չուտ հաշվեկշռային դիրք
ԱՄՆ դոլար	79,319	-	79,319
Եվրո	82,364	-	82,364
Ռուբլի	-	(677)	(677)

Վերը ներկայացված վերլուծությունը ներառում է միայն դրամական ակտիվները և պարտավորությունները: Ոչ դրամական ակտիվները չեն դիտարկվում որպես որևէ նյութական արժույթային ռիսկ առաջացնող:

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է շահույթի և վնասի զգայունությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կիրառվող փոխարժեքի հնարավոր փոփոխությունների նկատմամբ` Ընկերության ֆունկցիոնալ արժույթի հետ հարաբերակցությամբ, բոլոր այլ փոփոխականները հաստատուն պահելով:

Արտարժույթի փոխարժեքի աճ/ (նվազում)	2025թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա նախքան հարկումը շահույթի վրա ազդեցություն աճ/(նվազում)	2024թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա նախքան հարկումը շահույթի վրա ազդեցություն աճ/(նվազում)
ԱՄՆ դոլար		
Աճ 5% (2024` 10%)	7,627	7,932
Նվազում 5 % (2025` 10%)	(7,627)	(7,932)
Ռուբլի		
Աճ 5% (2024` 10%)	(89)	(68)
Նվազում 5 % (2025` 10%)	89	68
Եվրո		
Աճ 5% (2024` 10%)	8,935	8,236
Նվազում 5 % (2025` 10%)	(8,935)	(8,236)

(հազար ՀՀ դրամ)

17. Իրական արժեքի չափման գործընթացներ (շարունակություն)

Իրացվելիության ռիսկ

Հիմնադրամն իրականացնում է շարունակական վերահսկողություն վնասներ կրելու ռիսկի ուղղությամբ, որն առաջանում է իրացվելի ակտիվների բացակայության պատճառով ֆինանսական պարտավորություններն ամբողջությամբ կատարելու անկարողությունից: Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունների մարման ժամկետը մեկ ամսից պակաս է:

18. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվետու ժամանակաշրջանից հետո իրադարձություններ չեն եղել, որոնք կարող են պահանջել ճշգրտում կամ բացահայտում Հիմնադրամի 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններում: